



Ա.թ. օգոստոսի 30-ին Երևանի հիմնադրման 2800-ամյակի առթիվ Երևանում գտնվող Ճապոնացի հանրահայտ արվեստագետ, պրոֆեսոր Կունիտո Նագաոկան «Էրեբունի» պատմահնագիտական թանգարանում պատճենել է Երևանի «անձնագիր» համարվող ուրարտական սեպագիր արձանագրությունը: Աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տուրիզմի բաժնի նախաձեռնությամբ:

Արվեստագետը չինական ավանդական Տակու-Հոն դրոշմատպման եղանակով արտատպել է արձանագրությունը, ինչպես նաև Երևանի պատմության թանգարանում գտնվող հայտնի խաչքարի մեկ օրինակ:



Դրոշմատպման համար օգտագործվել է բարակ և ամուր թուղթ (բնական թելատու բույսերից պատրաստված) և համապատասխան ստվերաներկ (տուշ): Երևանում արվեստագետը օգտագործել է Ճապոնական «տանգո» տիպի թուղթ, որը պատրաստվում է հատուկ պատվերով: Յուրաքանչյուր ձեռագործ դրոշմատիպ համարվում է բնօրինակ և արվեստագետի ստորագրությունն է կրում: Ճապոնացի արվեստագետը նշել է, որ տպավորված է հայերի մշակութային, հոգևոր ավանդույթներով և ուզում է կենդանացնել ու փաստագրել հին խաչքարերի առաքելությունն իբրև քարե դրոշմատիպեր: Նա ընդգծել է, որ Երևանի հիմնադրման սեպագիր արձանագրությունը 21-րդ դարում յուրօրինակ արվեստի գլուխգործոցի մաս կարող է կազմել, չնայած, որ արվել է հազարամյակներ առաջ: Ճապոնացի պրոֆեսորը արտատպած օրինակը հանձնել է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին: